


ԵՐԵՅԱՆ ԲՇՏԻԿՆԵՐԸ

(Մ. ֆ.— Նիւ-Եօրթ).— Երեսին բշտիկները, որոնք կռքեցին, կանակին եւ ուսերուն վրայ այ յամախաղալ են, տեսակ մը մորթալին հիւանդութիւն է, արդիւնք գեղձաձեւիկներու մասնաւոր մանրեւով մը վառակման: Այս հիւանդութիւնը շատ աւելի կը տեսնուի իւրտ մորթ ունեցողներուն թով: Պընդունութիւնը, ստամոքսի ու աղիքներու խաղաղարումները, դժուարամարտութիւնը, արբուցը, նպաստաւոր ընդհանուր պատմաններ են: Յամառ հիւանդութիւն մըն է եւ կը բուժուի միայն երկարատեւ ու համարեքատար դարմանումով: Իսկ հիւանդկները կ'ուզեն դեղ մը որ սղանակի պէս կտրէ: Դժբախտաբար չենք կրնար այչ տեսակ դեղ մը յայնձնարարել: Նախ՝ դանդաղ ճաշ ըրէք, լաւ ճամեցէք, չոր հաց կերէք եւ քիչ, զգուշացէք ճարպոտ եւ տապկած կերակուրներէ, պնդութենէ: Յետոյ՝ համբերութեամբ գործածեցէք ձեր բժիշկին տուած դրսէն գործածելի դեղերը — որոնք ընդհանրապէս ճճումը կը պարունակեն — ինչպէս նաեւ ձեր բշտիկներու թարախով պատրաստուած պատուաստ մը (*Auto-vaccin*):

Թ Ո Ջ Ա Մ Ա Մ Ե Կ Ա Ս Ա Պ

(Գ. Ն. Գահիրէ).— Թորմաշկատապի (*Pleurésie*) մասին առանձին յօդուածով պիտի պատասխանենք:



ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ԲԺԵԿԱԿԱՆ Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բժշկական Միութիւնը իր ամսական Նիստը գումարեց Նոյեմբեր 16 ին: Ներկայ կ'են 17 հոգի: Բժշկուհի Շերմինէ Հովեան, համակրելի բանաստեղծուհիին, շահեկան դասախօսութիւն մը ըրաւ մանուկներու վարակիչ անդամալուծութեան մասին (*Poliomyélite infantile*): Եւրոպայի մէջ հազուադէպ հիւանդութիւն մը, որ սակայն համաճարակի հանգամանք առած է Ամերիկայի եւ մասամբ Ռուսմանիոյ մէջ: Յետոյ խօսեցաւ ՏքՊ. Եպուպ եղակներու ջլգոյնտութեան մասին (*Sympa-théctomie artérielle*):

Դ Ա Ս Ա Ռ Ո Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ծրանս. Բուսակերական Ընկերութիւնը կազմակերպած է հրատարակային շահեկան դասախօսութիւններ սննդաբուութեան, մասնաւորապէս բուսակերութեան մասին, որոնք տեղի պիտի ունենան *Mairie du VI^e arrondissement*ի մէջ, ժամը 8½ ին. Դեկտ. 8ին եւ 22 ին, Յունուար 12 ին եւ 26 ին, փետրուար 9 ին եւ 23 ին, Մարտ 6 ին եւ 22 ին եւ Ապրիլ 5 ին: Պիտի դասախօսին վիրարոյժ ՏքՊ. ՎիլքՊոր փօշէ (Ձեքրանալու արուեստի մասին), ՏքՊ. Լէ ի (Բուսակերին կանուսեակիբը), ՏքՊ. Տիֆըը (Մամուկին աճումը), աստղաբաշխ Ձեմիսէ (Արեւին ազդեցութիւնը մարդուն եւ բուսականութեան վրայ) եւ այլն: Մուտքը ազատ է:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՎԱՐԱԿԻՆ ԱՆԴԱՄԱԼՈՒԹՈՒԹԻՒՆ

(*Poliomyélite infantile*).— Այս հիւանդութիւնը վերջերս համաճարակ դարձած է Միացեալ-Նահանգներու մէջ: Ուաշինկթընի առողջապահական կեդր. Գրասենեակին վիճակագրութեան համաձայն, մանուկներու վարակիչ անդամալուծութիւնը Նոյեմբերի սկիզբը, միկ շարքուման մէջ, վարակած է 650 երակսայ, յաջորդ շաբթուն՝ 670 երակսայ: Այս ճանք հիւանդութիւնը հազուադէպ է եւրոպայի մէջ: Սակայն Միացեալ-Նահանգներու այս ստրատիկի համաճարակն այ յայնքան հազուադէպ է բժշկական տարեգրութեանց մէջ:

ԱՊԱԿԻ ԴՊՐՈՑ ԱԸ

Գերմանիոյ ՍԱԿԼԻԿ ջրաղբին մէջ կառուցուած է դպրոց մը, որ շինուած է բուրովին ապակի եւ երկաթէ: Շտապըքրական փորձ մըն է ասիկա, որ կատարուած է դպրոցական առողջապահական յանձնախումբի մը խնդրանքով, այն շոյտով որ աւելորաները շատ պիտի զգտուին, մասնաւորապէս թոքայտիկն ղէժ պաշտպանուելու համար: